



ԽԱԶԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՅԵՐԳԵՐ

891.99

դ-19



ԵՏՅՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

1934

22 JUN 2007  
19 NOV 2011


891.99  
7-18

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ  
ՅԵՐԳԵՐ

3625

1004  
32033



Ս. Ս. Մ. Ս.

1934

ՅԵՐԵՎԱՆ



28.03.2013

26948

8516387-4028-1

8516387-4028-1

8516387-4028-1

Գիրքն նվիրում եմ

Նրա գրական

20-ամյա մեծ ձանապարհին

Խ. ԴԱՇՏԵՆՆՅԱՆ

1933—34

դեկտեմբերի 31—հունվարի 1

Յերեան

Պատ. խմբ. [redacted]

ՅԵԽ. խմբ. [redacted]

Սերապիկ Ա. Տ. Ս. Ս. Ս. Ս.

Հաս. № 2993, Գլավիկ. № 8562 (բ)

Պատվեր № 182, Տիրամ 3000.

Հանձնված է արտադրության 10 հունիսի 1934 թ.

Ստացված է ավելի 29 հունիսի 1934 թ.

Գրադրամի պատրաստ. ՅԵԽ. խմբ., Ալլահվերդյան, № 27



\* \* \*

Պատանու պես վազելով, յես հեծն թողել եմ  
Յուրաքանչյուր տողի տակ իմ հույերից մի կրակ,  
Բայց խելագար, գիժ քամին առած բոցն ու շողերը  
Ամբողջ յերգիս դաշտերով փռել, սփռել ե նրանց:

Յեվ վառվում են տղերս, և յերգերս վառվում են.  
Զգույշ յեղիք, սիրելիս, այստեղ կրակ կա, կրակ.  
Տես, տղերիս ճեղքերից բոցն ու ծուխը փռվում են,  
Նրանց տակից շողում են կրակները կարծրած:

Բարձրանում են առաջին բոցն ու ծուխը անբաժան,  
Յեվ այրում են քո դեմքը. ո, հեռացիր, հեռացիր.  
Այդ քամին ե, գիժ քամին, և՛ խելագար, և՛ դաժան,  
Վոր բոցերը աջ ու ձախ շարտում ե ցան ու ցիր:

Յեվ դեռ վորքան աշխատանք, և վորքան ջանք պիտ  
լինի,

Վոր այդ ծուխը վերանա և չծխա դեպի քեզ,  
Յեվ բոցերը ֆնան շեկ, և վոչ մի ծուխ չլինի,  
Յեվ դու յերգիս հատակում անծուխ կրակը տեսնես:

Տեսնես յերգիս բոցերը և այրումը լուսեղեն,  
Հասկանաս ինձ, զգաս ինձ, և ինձ ներես անդադար.  
Յյուրաքանչյուր տողի տակ, վորտեղ բոցեր են յեղել,  
Ծռվա ե յեղել, և՛ կրակ, և՛ հանցավոր, և՛ արդար...



ԱՐԵՎԱԿ



## ՍՐԵՎԻՆ

Հանդիպում են մեկ-մեկ կապույտ աստղերը,  
Պղտոր ջրերն են անդուսալ վարարում.  
Ուռչում են յերգիս առաջաստները.—  
Սրղեն դարձն են, գարնն են, գարնն...

Պարզում եմ ձեռքս, ով դարնան արե,  
Յեվ կոմյերիտի սիրով անապակ  
Վռդշունում եմ քեզ, դաբեր ու դաբեր  
Շողացող, վառվող անմեռ արեդակ:

Շողան, ով արե, ով գարնն, ով կյանք,  
Յեվ կուրծքս կիզի՛ր, այբի՛ր քո հրով.  
Պարզում եմ ձեռքս, հղոր արեդակ  
Պարզում եմ կյանքս յերգերով, սիրով...



Վեր սլացող ձիերի պայտերի պես հրացայտ,  
 Ձեր յետևից փռելով փայլակ փողի ու կայծեր,  
 Դուք դուրսելով թուշում եք ճանապարհով իմ անցած,  
 Ու չի մեռնում շողշողուն սմբակների ձայնը ձեր:

Յերբ նայում եմ դեպի յետ, լողում են ձեր շարքերը,  
 Յիվ մութի մեջ անդադար ձիեր, ձիեր հերարձակ,  
 Փայլվում են փառացած ձեր շողշողուն դարկերը,  
 Ձեր լուսավոր բաշերը՝ ջրվեժների պես արձակ:

Հանձնեցի ինձ ձեր վսեմ սլացումին ու վաղճին,  
 Առաք տարաք ինձ դեպի հովիտները նոր կյանքի.  
 Հուրեր բերիք ինձ համար, ու շունչ տվեք իմ բաղկին.  
 Յիվ դեռ թափով անդադար սլանում եք անհանդիստ:

Խոնավում եք իմ դուռն և թվում ե խմբերով  
 Ու վոսկեգույն սանձերով ներս եք խուժում հեծի.  
 Ձեր կայծկատուն պայտերը իմ հատակին խփելով,  
 Վրնջում եք կատաղի ու փախչում եք դեպի յետ:

Ո, վոսկեգույն իմ ուրեր, ո, նժույղներ կատաղի,  
 Ո, դուրեցեք միշտ այդպես, ո, դուրեցեք անհանդիստ,  
 Վոր յես լսեմ ձայնը ձեր պատուհանից ու թաղից,  
 Յեվ ափելի խանդավառ կապվեմ պայծառ այս կյանքին:

Ո՛, սիրում եմ քեզ, կյանք: Ո՛, իմ գլխի վերև  
 Մի յերկինք կա կապույտ, մի արև կա խնդուն,  
 Յիվ իմ հողում անափ բերկրանքներ ու սերեր,  
 Յեվ իմ սրտում կյանքի կարոտանքն և թնդում:

Զրքնդում ե, շողում մի թովչություն անծայր,  
 Իմ աչքերում, սրտում, յերակներում այրվող,  
 Կարոտանքով, կրքով յես սիրում եմ պայծառ  
 Այս աշխարհը, կյանքը, այս արևը վառվող...

Վողողելով կյանքս և փովելով վարար  
 Քշում, տանում ե ինձ հողմանման մի խինդ,  
 Զկա, չկա վոչինչ իմ սրտի մեջ խավար,  
 Իմ կյանքի մեջ՝ անլույս, իմ աչքերում՝ մթին:

Ո՛, վոսկեգույն արև, ո՛, կյանք լիանչյուն,  
 Նոր աշխարհի պայծառ հերոսական ընթացք,  
 Վոր իմ սիրտը անմար շողերով ես լցնում,  
 Ո՛, կյանք, ո՛, կյանք ո՛, կյանք...

Իմ լուսավոր ուրեր, լցրեք, լցրեք իմ մեջ  
 Ձեր վողեշունչ հուրը, մշտաբորբոք ու վառ,  
 Ո՛, սիրում եմ քեզ, կյանք, անհանդիստ, հավերժ,  
 Ակունքներից ակունք վերափռվող աշխարհ:



Ահա որը, արեգակը,  
 Յեւ աշխարհը այս բոցեղեն.  
 — Թե ուզում եք ապրել կյանքում,  
 Այս աշխարհում խնդուն յեղեք:

Յեւեք փողոց, յեղեք վառման,  
 Նայեք գարնան, ծաղկին, շողին,  
 Յեւ ձմեռեք բուրբ գարնան,  
 Շունչը վառված մեր նոր հողի:

Միայն այստեղ, այստեղ միայն,  
 Միայն այստեղ պիտի ապրել,  
 Այս բոցեղեն, այս հրավառ  
 Յերկրի հրով պիտի հարբել:

Պիտի փարվել այս լուսավոր,  
 Այս շողշողուն մոլորակին,  
 Յեւ հայացքով վսեմ ու բորբ  
 Պիտի նայել արեգակին:

Պիտի ձուլվել սիրով անգին  
 Ու հույզերով մակընթացող —  
 Այս հոյակապ հողագնդին  
 Յեւ որերին այս ընթացող:

Պիտի շողալ ու մաքառել  
 Յեւ աշխարհը փոխել սրով,  
 Յեւ աշխարհը բոցավառել  
 Աշխատանքի պայծառ սիրով:

Ո', Հաֆիզ. ահա դարեր հետո,  
 Յերբ արեգակն է կրկին ժպտում մարդուն,  
 Ծաղկած մի ծառի տակ, առլի ափին նստած,  
 Յես քո գարնանային յերգերն եմ կարգում:

Ո', Թմրության, գինու կախարդական յերգիչ,  
 Ահա ծաղկած ծառը, ահա գարուն,  
 Շուրջը փռած կայտառ աղմկածայն քրքիջ,  
 Ծաղկած ծառի կողքով սլանում է առուն:

Կապույտ յերկինքը կա և կանաչներ թավիշ,  
 Յեւ կա կյանքը, կյանքը մեր՝ բոցեղեն, վառման.  
 Իսկ դուք չկաք, ո', դուք, խայամ, Հաֆիզ,  
 Դուք, յերգիչներ գինու և լուսեղեն գարնան:

Դուք, վոր յերազեցիք, առլի ափին նստած,  
 Գինի խմել միայն, հարբել ծաղկանց բույրով,  
 Ծնվել, ապրել կյանքում և ապավել արբած  
 Ծաղիկներով, սիրով ու համբույրով:

Ո', դուք յերբեկցե յերազեցիք արդյոք,  
 Վոր մենք կգանք, Հաֆիզ, վոր մենք կգանք, կգանք,  
 Յեւ ձեր յերգած հողի և աշխարհի վրա  
 Կկառուցենք պայծառ, անդուգական մի կյանք:

Վոր կունենանք մենք սիրտ՝ ավելի բորբ ու տաք,  
 Յեւ ավելի պայծառ, անանձնական հույզեր,  
 Յեւ ձեզանից խորունկ մենք կսիրենք կյանքը,  
 Յեւ կունենանք մենք սիրտ, և՛ կունենանք մենք սեր:



Վոր կտեսնենք մենք ել յերթր արեգակի,  
Ծաղիկների կարմիր թերթիկները նրբին,  
Յեւ առուններ վաղող, և արևներ անդին,  
Գարնան ցողը նստած կանաչներին, թփին...

Բայց այդ ծաղիկներից և ցողերից բացի,  
Մենք կսիրենք, Հաֆիզ, մաքառել ու կուլել,  
Յեւ խնդուլթյամբ վառված, առանց արտասուքի  
Շողողալ ու պայծառ հաղթանակով մեռնել...

Վոր կսիրենք մենք վառ այս աշխարհը հիմքից  
Ըմբոսառթյամբ, ցասմամբ, մաքառումով փոխել,  
Քեւ յերգերով մեր մեծ, մեր յերգերով անբիծ  
Այս աշխարհը գալիք սերունդներին թողնել:

Վորպեսզի վառ մի որ, մի ծառի տակ նստած,  
Ինչպես յես եմ նստել, ինչպես նստել ես դու,  
Մեր ապագա զվարթ քաղաքացին, անցած  
Մեր յերգերը կարդա այնքան հորդ ու խնդուն:

Կարդա հերոսական մեր պայքարի մասին,  
Մեր որերի մասին, յերբ շահել են սրեր,  
Յեւ աշխարհը սիրի այնպիսի խոր սիրով,  
Այնպիսի վառ սիրով, ինչպես մենք ենք սիրել:

Բաղում պոետներ են քեզ աշխարհում յերգել,  
Յեւ յերգում են ելի,  
Գարուն, դարձն ես դու, ո՛ր, դու, զվարթ արև,  
Խնդուլթյունով ես լի:

Յեւ դու, արև ես դու, հավետ բոցկլտացող,  
Ով արեգակ պայծառ,  
Դու, վոր շողում ես միշտ, դու, վոր վառվում ես միշտ,  
Յեւ խնդուն ես, և՛ վառ:

Նրանք յերգել են քեզ, զվարթ, զվարթ դարուն,  
Ձոնել են քեզ յերգեր,  
Յեւ արեգակ շողջող, կապույտ, կապույտ սերեր  
Յեւ ամպեր են յերգել:

Սակայն քեզ չեն յերգել հողի վրա խոժող  
Բեղմնավորող դարուն,  
Յեւ քեզ, դարնան ուժով պղտոր, պղտոր վաղող  
Ստեղծարար առու:

Ո՛ր, ընթացիլ վարար, հրաբուրբ, բեղուն,  
Ստեղծարար դարուն,  
Վոր բացվում ես անծայր, ու փռվում ես պայծառ  
Մեր աշխարհում:

Փովիլ համայնական մեր արտերի վրա,  
Գարուն, դարուն խոժող,  
Քեզ եւ յերգում, արև, քեզ եւ յերգում, դարուն,  
Սրտիս ամբողջ ուժով:



Դեռ չի յեղել յերեք հուլիսի ու սերո  
Այսպիսի վառ անկում  
Մեր սրտերում, կյանքում  
Փլուզումներ աշխարհում իմաց ու խոր...

Մենք տեսնում ենք՝ ինչպես այրված հասկերի պես  
Ցած են թափվում վարար,  
Ցրիվ ու հողմավար  
Հին հուլիսի տարտամ, ապրումները պեսպես...

Ո, տերևներ դեղին, անողնական, արտում,  
Արդեն խորիվ դարձած,  
Դուք մեռնում եք անդարձ,  
Դուք մեռնում եք անդարձ մեր յիրդերում, սրտում,


Վառվիր, արև, վառվիր, մեր սրտերում քամիր  
Ինչո՞ւ շողերը կիզող,  
Անասլական ու դով  
Փչիր, աշխատանքի դու սրբազան քամի:

Ախտահանիր, արև, ո՛ր, մեզ ախտահանիր,  
Թափվիր դու անդադար,  
Ինչ կրակը վառվառ  
Յե՛վ ամոքիչ, և՛ ջինջ, և՛ ջերմ, և՛ ծիրանի:

Ո, մենք կարոտ ենք քեզ, նոր արեղակ արդար,  
Կիզիր, կիզիր դու մեզ,  
Շուտ անձրևի պես  
Թափիր, թափիր լույսդ դու անդադար:

Թող մեր հողին խաղառ քո հուրերով սրբվի  
Հին հուլիսից տարտամ,  
Ո, արեղակ արդար,  
Թափիր, թափիր լույսդ դու անդադար...

3625  
1008  
32053





ԽԱՌՆ ՅԵՐԳԵՐ



Սիրելի Գուրգեն, կոմյերիս ընկեր,  
 Ինչ վոր գրում եմ, գրում եմ վստահ.  
 Ո՞վ գիտե հիմա ճամբա յես ընկել,  
 Յե՛վ կամ ո՞վ գիտե, վճրտեղ ես նստած:

Նստած ես արդյոք մի, փափուկ բարձի,  
 Կամ ձիու թամբին, էյ, ո՞վ իմանա:  
 Թողնենք այդ սակայն, դառնանք այն հարցին,  
 Վոր ինձ հուզում ե յերկար ժամանակ:

Վորտեղ ել լինես — բարձի՞ն, թե թամբին,  
 Թե գարնանային ամպին նայելիս,  
 Թե հողնած նստած լինես զու ճամբին,  
 Իմ այս նամակը կարդա, սիրելիս:

\* \* \*

Գրել եմ յես քեզ միքանի նամակ,  
 Այդ նամակներում գրել եմ կըքոտ,  
 Վոր զըրնգում ե իմ կյանքը համակ  
 Այս լուսապայծառ որերի յերգով:

Սակայն հենց յերեկ զգացի, վոր ինձ  
 Դեռ սպառնում են ահավոր բացեր,  
 Դեռ մրուրներ կան քամված իմ սրտում  
 Յե՛վ սավերներ կան, վոր չեն չքացել...

Յերեկ, յերբ մենակ անցնում եյի յես  
 Հողիս վողողած սիրո աստղերով,  
 Նայեցի վերև. ամպերը անցան  
 Իրենց լուսավոր առաքաստներով:



Այդ պահին հանկարծ մի ուրախություն,  
Տխրություն իջավ իմ հոգու վրա,  
Յեզ յես հուշերով վերադարձա սուրն.  
Իմ հոգում ե՛կ ցուրտ, ե՛կ ծովա, ե՛կ կրակ...

Ա՛խ, ինչո՞ւ համար արևում այս թեժ,  
Հավերժ գեղեցիկ այս առավոտում,  
Չնչին հույզերը մրթկում են մեզ,  
Յեզ մենք թախծում ենք, տխրում, կարոտում:

Ինչո՞ւ յենք նայում չքնաղ դաշտերին  
Կապույտ աշխարհի կարոտով արձակ,  
Յեզ սիրում ենք մենք յերթը ամպերի,  
Յեզ արևագույն դաշտերը ծաղկած:

Ո՞վ ե մեզ ավել այսքան բազմազույն  
Զգացմունքների անհատակ մի ծով,  
Յեզ ռժ ե, ռժ ե մեր սիրալ լցրել  
Դավաճան ու չար արևի բոցով:

\* \* \*

Մենք մեզ բավական սրբել ենք թեկուզ,  
Կառուցել ենք մեզ և վերաշինել,  
Սակայն ճեղքեր կան դեռ մեր սրտերում,  
Փլվածքներ դեռ կան, լուր պետք ե շինենք...

Ա՛խ, յերբ կմեռնեն այս հույզերը խենթ,  
Յերբ կդադարեն սուլոցներն այս չար,  
Յերբ կմահանան մեր սրտում անհետ  
Զգացմունքները այդ դարանակալ:

\* \* \*

Վորպես ձիավոր, վոր յես չի նայում,  
Մեր տարիների սանձերը քաշած  
Ուրախ յերգելով, սրընթաց, անցած՝  
Մենք այս արևոտ դաշտերը հասանք...

Նրանք՝ սանձարձակ տարիները մեր  
Տվեցին մեզ թափ, ե՛ արև, ե՛ ուժ.  
Նրանք ցրեցին մեր հոգու միջից  
Անցյալի բոլոր ամպերը մշուշ:

Լցրին մեզ կյանքի յեռուն հորձանքով  
Կատարից-կատար հանեցին մեզ վեր,  
Յեզ մղեցին մեզ մարտական թավով  
Դեպի արևոտ, լուսավոր ամիս:

Այժմ տեսնում ենք աշխարհն ավելի  
Իրական ու մեծ, ավելի արձակ,  
Յեզ հոկտեմբերյան հրով հավիտյան,  
Դադաթից-գադաթ լուսավոր դարձած...

Սակայն սուլում ե դեռ մեր սրտերում  
Մի դարանակալ, ցրտաշունչ քամի,  
Վոր մեզ անկում ու թախիժ ե բերում,  
Մեր աշխատանքի և սիրո ժամին:

Յեզ մենք ապրում ենք այդ մութ հույզերի  
Մահացման վերջին, վերջին գիշերը,  
Յեզ այդ գիշերում մեռնում ե քամին,  
Յեզ մութրանում են բոլոր հուշերը:



Անցնում են բոլոր հիշատակները,  
Յեւ իրակաները՝ դողդոջ ու յերեր,  
Յեւ աշտպես արագ մոխիր են դառնում  
Մեր սրտում անցած ապրումներ, սերեր...

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՅԵՐԳ

Կես գիշեր ե, մութ ե, և գիշերում խորին  
Նստած կարդում եմ յես լուսամիտի տակ,  
Յեւ Գյոթեն ե գալիս և անցնում ե նորից,  
Յեւ Հայնեն ե լալիս ու հեկեկում մենակ,  
Յեւ աշտպես փակված, կես գիշերում անքուն  
Նստած կարդում եմ լուսամիտի տակ:

Ոթելլոն ե խանդից, կասկածանքից լալիս,  
Հեկեկում ե անքուն Հայնրիխ Հայնեն ելի:  
Անտառների խորքից, տես, Համսունն ե գալիս,  
Բարձրանում են թափով Եգգար Պոն ու Շելլին.—  
Յեւ դռները փակած և անշշուկ, մենակ  
Նստած կարդում եմ յես լուսամիտի տակ:

Ո՛, գրքեր են, գրքեր, խարույկներ են անցած  
Ու հիշատակ դարձած պատմություններ, յերգեր,  
Ամեն մեկը արնով ու հույզերով արձակ  
Իր յերազը և իր ժամանակն ե յերգեր:  
Նրանք յերգել են սեր, նրանք մահ են յերգել,  
Անկումներ ու կոխի, պոռթկումները դարի,  
Նրանք նկարել են արյունաքամ վերքեր  
Յեւ բաղխումներ բազում, քնքշություն ու կարիք...

Ո՛, վորպիսի՜ վառվառ ու բազմազան յերգեր,  
Վորպիսի՜ վառ սերեր ու ապրումներ անդամ,  
Յեւ անսահման լացող, վորոտացող կրքեր,  
Ըմբոսառություն, հույզեր, տխրություններ ու ցավ...



Յեւ յերբ անցնենք մենք այդ բարձունքներից անցած,  
կարոտանքից, կրքից, կատարներից այրող,—  
Մենք կուեննանք յերգեր՝ այդ յերգերից պայծառ,  
Յեւ ավելի հզոր, և ավելի կարող:

Շատաչում ե քամին, տարուերում յերեք  
կիպարիսները բարձրահասակ,  
Նբանք որորվելով շըշնջում են՝ պոետ,  
Մենք հասակ առած ծառեր դարձանք:

Մենք բարձրացանք, դարձանք բարձրահասակ ծառեր,  
կիպարիսներ դարձանք լուսավոր ու վերձիվ,  
Մենք ձգտեցինք անվերջ դեպի պայծառ արև,  
Մենք աճեցինք դարեր, ու հոգնեցինք:

Արդեն կոացել ենք քո տնակի վրա,  
Մեղ քամին ե ծեծում, ցնցում առաջ ու յետ.  
Մենք ապրեցինք յերկար, մենք մեռնում ենք ահա,  
Արդեն ծերացել ենք, սիրելի պոետ:

Սպասեցինք յերկար, վոր կդառնաս դու տուն,  
Այցի կդաս ծովին, կբարձրանաս լեռներ,  
Սպասեցինք յերկար, բայց իմացանք հետո,  
Վոր չես ապրում, ավաղ, վոր վաղուց ես մեռել...

Ակնթարթ ե կարծես, սակայն նայում ենք մենք՝  
Սերունդներ են անցել հողմի նման,  
Իսկ մենք որորվելով դեռ մնում ենք՝  
Կապույտ ալիքների ու քամու գիմաց:

Մեր շուրջը նոր ծառեր, կիպարիսներ արագ  
Բարձրանում են, աճում ու ձգտում են վերե,  
Ո՛ր, մենք կրնկնենք, պոետ. մի՞թե, մի՞թե նրանք  
Մեր ապրելու այս խեղճ ընթացքը կներեն:



Ո՛ր, մենք կընկնենք, պստո, բայց քո յերգերի մեջ  
Մենք զեռ կապրենք յերկա՛ր, յերկա՛ր դարեր,  
Յե՛վ կհիշեն մարդիկ, վոր դու ունեցել ես  
Յերեք կիպարիսներ, յերեք փոքրիկ ծառեր:

Յե՛վ մեր կյանքից միայն քո շողշողուն, անմահ,  
Հավերժական, պայծառ յերգը կմնա,—  
Իսկ մենք այս ահա՛վոր բարձրությունից ընկած՝  
Անողնակա՛ն, անզոր կանցնենք ~ կզնանք...

ՀՈՎՆ ԵՐ, ՀՈՎՆ ԵՐ ՇԸՆԿՇԸՆԿՈՒՄ

Հո՞վ եր, հո՞վ շընկշընկում,  
Մեր սարը մի հովարան, —  
Յես չեմ տեսել այդքան վառ,  
Այդքան պայծառ տեսարան:

Սարալանջում խոտհունձ եր,  
Ամբողջ սարը խոտ ու հով,  
Որորվում եր սարը մեր  
Ալիք~ալիք, վորպես ծով:

Հինգ գերանդի, հինգ մանդաղ,  
Տաս կոմյերիտ ընկերներ,  
Հովերի մեջ փաթաթված  
Շարժվում եյին ստրն ի վեր:

Հո՞վ եր, հո՞վ եր շընկշընկում  
Մեր սարը մի հովարան, —  
Յես չեմ տեսել այդքան վառ,  
Այդքան պայծառ տեսարան:

Լայնաթիկունք, կրճաբաց,  
Յե՛վ գլխաբաց, և հարբած,  
Դոտիները պինդ կապած՝  
Ու հովերով փաթաթված. —

Հարում եյին ու յերգում,  
Խոտն եր հոսում լուսի պես,  
Ու այդ պայծառ խոտհարքում  
Հարբել եյի յերգով յես:



Հովն եր, հովն եր շընկշընկում,  
Մեր սարը մի հովարան, —  
Յես չեմ տեսել այդքան վառ,  
Այդքան պայծառ տեսարան...

## ՍԵՐՄԵՐԻ ՅԵՐԳԻ

Սերմերի եյիք, շարքացանը շաղ ալեց մեզ արտերում,  
Ընկանք փխրուն հողի մեջ, ահոսներում բարերեր,  
Յերբ արևը գուրգուրեց, մենք շարքերով յեկանք վեր  
Ու շարքերով ձգվեցինք, հոյ, արտերում, արտերում...

Հետո դարձանք մենք հասկեր ու հովերին փարվեցինք,  
Լույսերի մեջ լինչ վաղք եր, և լինչ ծիծաղ եր հասկի,  
Ո, ինչ մեծ եր արտը մեր, և՛ բեղմնավոր, և՛ վոսկի,  
Արտը մեծ եր մեղանալի, և մենք արտում մեծ եյիք...

Ալիք-ալիք լողացանք հյուսված լույսի թելերին,  
Ալիք-ալիք շողացանք հովերի տակ, լույսի տակ  
Յեզ ասացինք աշխարհին.—Ո՛, մենք շատ ենք, ո՛, մենք  
կանք,

Յեզ քանի մենք կլինենք, աճումը միշտ կլինի...

Մենք թեղված ենք, հոյ, հիմա ամբարներում անհատակ,  
Բայց մենք այն չենք, ինչ եյիք, և զի և մեզ ճանաչում.  
Սակայն սերմ ենք մենք նորից և մեր անունը՝ աճում,  
Քանի արևն և կանգուն, մենք կլինենք ու միշտ կանք...

Հոյ, ցանեք մեզ, ցանեք մեզ, ամբարներից լույս հանեք,  
Ահա գարունն և նեառում իր շողերը հողի տակ.  
Յեթե մնանք մենք այստեղ, մենք դայրույթից ծիլ կտանք,  
Զի մենք սերմ ենք, և մեզ միշտ պետք և ցանել ու ցանել...



ՀԿԱՆԱԶ, ՎԻՅԵԱՐԻ ԸՆԿՈՒՋԵՆՈՒ ՏԱԿ»

Դու անցել ես, պոետ, դու անցել ես անդարձ,  
Սակայն քո յերգը կա և ապրում և անմեռ,  
Այնքան թովիչ ու պարզ, այնքան խորունկ ու բարձր,—  
Վառ հնչում և յերգը և մեզ հուզում և ղեռ:

Ո՛, սիրելի, ո, մեծ, գարնանային պոետ,  
Մենք յերգում ենք կրկին անուշ յերգերը քո,  
Սակայն մենք չենք նստում քո վիթխարի ու մեծ,  
Կանաչ ու բաղմամբյուղ ընկուզենու ներքո:

Որորվում և թեկուզ կանաչ ընկուզենիդ,  
Բայց ուրիշ և յերգը և ուրիշ և գինին,  
Ծաղապատիկ նստած չենք յերազում հիմի,  
Վոր աշխարհում խորին խաղաղություն լինի:

Զվարթ սերունդ ենք մենք, վոր աշխարհն ենք փոխում,  
Մաքառումով, կովով, ստեղծագործ ձեռքով,  
Յեւ աշխարհն ենք լցնում առնական ու հախուռն  
Աշխատանքի խիղախ, զվարթաձայն յերգով:

Մենք յերգում ենք կյանքը և պայքարն ենք յերգում  
Յեւ հիշում ենք յերգդ՝ այնքան, այնքան անուշ,  
Սակայն որորում ենք կանաչ ընկուզենիդ  
Յեւ բոլորին վտաքի ու կովի յենք հանում:

Մենք ասում ենք.— յեկեք, կանաչների վրա  
Ծաղապատիկ նստած, ո, միք կառչի հնին,  
Միք յերազի յերբեք, վոր հրաշքով մի վառ  
Այս աշխարհում խորին խաղաղություն լինի:

Խաղաղություն, ո, քեզ, մեր սիրելի անուն,  
Մենք հիշում ենք անուշ, անուշ յերգերը քո,  
Սակայն մենք չենք նստում, ծաղապատիկ, ախուր  
Քո վիթխարի, կանաչ ընկուզենու ներքո:



## 1

Լսում եմ կարծես մեր բարակ առվի կարկաչը անվերջ,  
Վորի ջուրը յես այնքան խառնեցի ու պղտորեցի,  
Բարդենու թափած թերթերը լցրի նրա ջրի մեջ,  
Ավաղ հանեցի, քնեցի հաճախ նրա յեղերքին:

Տեսնում եմ կարծես մեր հին, գետնափոր խրճիթը խափար,  
Բարայրի նման մեջքը դեմ աված անտառի ճամբին,  
Յեղ քեզ եմ հիշում անհուն կաբոտով, սիրելի իմ հայր,  
Յեղ քեզ հեռավոր, աստղազարդ գիշեր իմ անզարդ կյանքի:

Լուսինն եր կանգնել մեր առվի վրա, անտառի դիմաց,  
Հավաքվել էյին աստղերը զվարթ յերկնակամարում,  
Սրինգը ձեռքիդ նվագում էյիր, մեր բակում նստած,  
Բարդիների տակ մեզմ կարկաչում եր մեր դռան առուն:

Ա՛խ, դու հորդեցիր իմ յերակներում մի անհուն ծարավ,  
Իմ սրտի մեջ՝ սեր և իմ աչքերում—հրավառ մի կյանք,  
Սըրինգիդ անուշ յելեկջներով ինձ առար-տարար,—  
Յեղ դու չհասար այն վառ որերին, վորին մենք հասանք:

## 2

Մենք զրինք բոլոր շվինները ցած, ջութակները՝ վար,  
Փըշրեցինք բոլոր սըրինգները մենք, մի ահեղ գիշեր,  
Մենք փողեր առանք և առանք զենքեր, սիրելի իմ հայր,  
Մոռացանք մի պահ, վոր կա աշխարհում քնքշություն  
ու սեր:

Մեր հոգու խորքում թաղեցինք մի պահ ցուք ու ծիա-  
ծան,

Գթության բոլոր կածանները մենք ծածկեցինք ծխով,  
Մենք սըրինգների ու ջութակների վրայով անցանք,  
Թնթանոթների, գնդացիների բացված յերախով:

Ծխով ծածկեցինք վառ աբեզակի դունդը լուսեղեն,  
Լուսնի շողերը թնդանոթների ծխի մեջ հանգան,  
Յեղ ո՞վ եր հիշում, վոր այս աշխարհում կարոտ է յեղել,  
Սերեր են յեղել, քնքշանք է յեղել աշխարհում անգամ...

Մենք չեյինք ներում յերբեք վո՞չ վոքի, և չեյինք խղճում,  
Քնքշության բոլոր սափորները մենք փըշրեցինք ան-  
ձայն.

Յեղ մեր բաղխման մեջ, ուր թնդանոթի փողն եր վորո-  
տում,

Չեր լսվում յերբեք ջութակի, սիրո և սըրնգի ձայն...

Ա՛խ, դու չտեսար և դու չհասար մեր վառ որերին.  
Սըրինգը ձեռքիդ դու ընկար, հայր իմ, ընկար յերգելով.  
Ինչ վոր դուք չարիք ձեր սըրինգներով, յերգերով խորին,  
Մենք ավարտեցինք բոլոր համազարկով ու վառ զեն-  
քերով:

Յեղ դու անցել ես, դու մահացել ես, սիրելի իմ հայր,  
Անցել ես, վորպես յերազն է անցնում, ու յերգը խաղաղ,  
Չիմացար ինչե՞ր, ինչե՞ր հանդեցին մեր աչքերի մեջ,  
Ինչե՞ր վառվեցին, ինչե՞ր մոխրացան և ինչե՞ր յեղան...



Մենք վերադարձանք մեր սրտում՝ կարոտ, մեր աչքերում՝ սեր.  
 Լուսավոր սիրով ժպտացինք կապույտ աշխարհին  
 դարձյալ,  
 Դեռ յերբեք կյանքում մեզ յերգը այնքան, այնքան  
 չէր հուզեր,  
 Յերբ մենք գնդերով, հաղթական յերթով գերեքերեց  
 դարձանք:

Յեւ մենք, վոր կոչում այնքան անողորմ և անսիրտ  
 յեղանք,

Ծարավել եյինք յերգի, նվաղի, լուսավոր կյանքի,  
 Ազահ աչքերով մենք խուժում եյինք նորից դեպի կյանք,  
 Յեւ նայում եյինք կյանքի լուսավոր արեածաղին:

Մենք անցնում եյինք և մեր վտաքերին շողերով շող-  
 ված,

Յեւ ծուխ եր, և՛ ցուք, արեածաղի փայլը առաջին.—  
 Մենք անցնում եյինք արշալույսների լույսով վո-  
 դողված,  
 Ինչպես գնդերն են հաղթական անցնում արևի դեմից...

Յեւ զընդում եր ծարավ յերկիրը մեր վտաքերի տակ,  
 Յեւ արեգակն եր մեր մուրտակը ցուքերով վառում,  
 Յերանի մեզ, հայր, վոր ապրեցինք մենք վիթխարի  
 մի կյանք,

Յեւ Հոկտեմբերյան արեածաղը տեսնք աշխարհում:

Տեսնք բարձրացող արեգակն այս վեհ աշխարհի վրա,  
 Կատարից-կատար լուսավառումը բոլոր կողմերում.  
 Յեւ աշխատանքի սրբազան շնչով լցրինք մենք կյանքը,  
 Աշխարհը լցրինք ստեղծագործության հզոր հողմերով:

Հիմա յերգում ենք և նվազում ենք կարոտով անքուն,  
 Յեւ դեռ չի յեղել աշխարհում այսքան նվաղ խնդադին,  
 Յերբ սրինդներն են այսքան հիաքանչ ու վառ նվազում,  
 Յեւ այսքան անուշ մեղեդիներ են հուզում մեր հողին:

Մեր կրծքերի տակ բոցեղեն սիրով ցուրտ և կյանքը,  
 Բերկբությունները խուժում են, ինչպես կատաղի ջրեր,  
 Յեւ այս լուսավոր որբերի խորքում յիս քեզ եմ հիշում,  
 Հեռավոր իմ հայր, հավիտյան անցած աստղազարդ  
 գիշեր:

Եւ չեմ պիտոքում մեր դառն առուն այնքան սրնթաց՝  
 Ավազ չեմ հանում ու եւ չեմ քնում նրա յեղերքին.  
 Նրանից միայն մանկության մասին մոռնի մի հուշ մնաց,  
 Յեւ քո սովերը՝ նստած մեր բակում՝ սըրինդը ձևեքին:

Իմ սրբերի հայր, հավիտյան անցած իմ ուրնդահնոր,  
 Դեռ ապրում եմ յիս և դեռ վառվում ե արեւը կրկին,  
 Յեւ աշխարհն անհուն զընդում ե զվարթ ու արեամբայ,  
 Անսահման սիրով դեռ վողսղված ե յերկիր ու յերկինք:

Յեւ վողսղված ե ապրելու անշուք իմ սիրտը համակ,  
 Յեւ յերջանիկ եմ, վոր ապրում եմ յիս այս արեգակին,  
 Այս զվարթադին և լուսավարար յերկինքների տակ,  
 Յեւ մասնակցում եմ այս հերոսական, վիթխարի կյան-  
 քին:



**ՄԱՆՐ**

**ԲԱՆԱՍՏԵՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



\* \* \*

Մեր այս որերում կառուցողական,  
Մոխրացար, վորպես կրակ, ու հանգար,  
Դու, վոր թվացիր մի որ ծխածան,  
Արև թվացիր իմ հոգու համար:

Իմ սրտի վրա արևը շողաց,  
Ու գրոհելով զարուհը խուժեց,  
Դեղանից այսօր փնացին միայն  
Տաղաուկ ու չնչին մոխրացած հուշեր ...

Մնացին անլույս գիշերներ միայն,  
Յեւ հիշատակներ ցնորք աղջկա,  
Դու մեռար, աղջիկ, և չկաս հիմա,  
Դու աստղի նման իմ հոգում հանգար:

Եւ ուր ներքուիմ քո դեմքը լուսե՛  
Պատանեկական չնչին ցնորքով.  
Յերգում եմ հիմա քեզ անհայտ հույզեր  
Արևի նման շողջողուն յերգով:

Այրված աստղերի հույլերի նման  
Թափվում են անցած պատրանքներս ցած.  
Տեղատարափ ե իմ հոգում հիմա,—  
Յեւ արշալույս ե, և՛ արևաբաց ...



## Մարտիկ

Դու կմնաս միշտ պայծառ  
 Իմ յերգերում բովանդակ,  
 Վորպես հաղար հույզերով  
 Մշտափոփոխ մի անտառ,  
 Ուր կա արև, յերգ ու շող,  
 Յեվ թուփ, և՛ ծիլ, և՛ աճում,  
 Ուր բովանդակ կյանքն է հար  
 Շառաչելով կանաչում:

Դու կմնաս իմ յերգում  
 Անտառի պես մշտավառ,  
 Անտառի պես գեղեցիկ,  
 Աղմկոտ ու հողմավար ...  
 Անտառի պես միշտ շոթյլ,  
 Յեվ անհատնում, և՛ առատ,  
 Յեվ պարզ, և՛ մութ, և՛ մռայլ,  
 Յեվ հավիտյան անարատ ...

Դու կմնաս միշտ պայծառ  
 Իմ յերգերում յերգեցիկ,—  
 Անտառի՛ պես հողմավար,  
 Անտառի՛ պես գեղեցիկ ...

\* \* \*

Հայնրիխ Հայնեն է յերազեմ մի որ՝  
 Կապույտ յերկնքի լույս ֆոնի վրա  
 Սիրած աղջկա անունը գրել,  
 Սիրած աղջկան յերազել միայն:

Իսկ յես ռեզում եմ անունդ, ընկեր,  
 Գրել այս հողին պայծառ տառերով,—  
 Վորպեսզի անմեռ ու անմար լինես,  
 Ու հողի նման ապրես դարերով ...



ՎՈՍԿԵ ԱՆՁԵՐ

Սիրով Գուրգեն Մահարուն  
«Մըգահաս»-ի առթիվ:

Քո գրքի փոշոտ ճամբին  
Ընկած են վոսկե սանձեր.  
Մի ձի յե առանց թամբի  
Դոփելով արագ անցել ...

Աղջիկներ կան քո գրքում,  
Յեւ անսանձ ձիու սանձեր.  
Թե հասնեմ յես քո ձիուն,  
Անդայման պիտի սանձեմ ...

Քո գրքում՝ գանձեր, գանձեր,  
Քո գրքում՝ վոսկե սանձեր:

ԱՆՏԱՌՈՒՄ

Յերեկո յե. նստած տանը,  
Յես Համսունի «Պան»-ն եմ կարդում,  
Դեմս նստած ե Գլանը.  
Լուռ լսում եմ յես այդ մարդուն:

Շուրջս անասու, գիշեր, լուսին,  
Ու մի խարույկ այդ անտառում,  
Քարույկի մոտ մի շուն, մի սիւրտ ...  
\* \* \* \* \*

— Լուռ կաց, Յեզնը, միաս ե դալիս  
Զարմանալի մի առասպել ...  
\* \* \* \* \*

Պատահալովը աշտարակում  
Մի գեղեցիկ հարս ե ապրել ...  
\* \* \* \* \*

Ու ընկղմված այդ գրքի մեջ  
Հին անտառում այնքան գեղող,  
Յեզորի հետ լսում եմ յես  
Պատմությունը այդ հին սիրտ:



Հանկարծ վորպես լույսի փայլակ,  
Վորպես շանթի հզոր հարված,  
Մեկը դուռս բացեց արագ  
Ու բարձրաձայն կանչեց վառված.—

—Դեպի արևն ելին գնում  
«Ամբոխները խելագարված»...

. . . . .

Խարույկն հանդեց անստառում իրուշ  
Ու Գլանը անդարձ դնաց ...

. . . . .

Սրտով, սիրով, հրով լի  
Քեզ եմ յերգում, Սողյուծի:

Դպրոց, խրճիթ, լիկկայան,  
Հետո փռքբիկ մի կայան:

Ասվի վրա մի խրճիթ,  
Վարիա, Շուշիկ ու Սաչիկ:

Յերեկոներ հուրհրան,  
Զրույց, յերգեր ու կրակ:

Սրտով, սիրով, հրով լի,  
Քեզ եմ յերգում, Սողյուծի:

Ա՛խ, ինչ լավ եր, ի՜նչ առույգ,  
Վառվում եյինք վոնց զարուհ:

Վճնց եյինք մենք գյուղը փոխում,  
Վառվում, յերգում, ու շողում:

Վճչ դադար կար, վճչ հանգիստ,  
Որեր անմեռ ու անգին ...

Սրտով, սիրով, հրով լի  
Քեզ եմ յերգում, Սողյուծի:



Յերբ իմ ուսուցիչը կապույտ կավիճով  
Դրատախտակին գրեց  $a+b$ ,  
Յես տետրակս բացի ու տետրիս միջուկ  
Նկարեցի մի աղջկա գլուխ:

Աշակերտական որերս անցան,  
Մեծացա յես ել, ուսուցիչս՝ գնաց,  
Ու իմ տետրի մեջ, վորպես մի ֆորմուլ  
Այդ չար աղջկա գլուխը մնաց ...

Հիմա նայում եմ յես այդ նկարին,  
Ու ժպտում եմ յես տարամերժորեն.—  
Տակը գրել եմ.— ձեզ չեմ մոռանա,  
Աշակերտական անհանդիստ որեր ...

\* \* \*

Իմ անգին ուսուցիչ, ֆորմուլներդ չկան,  
Հիմար եյի յես, անխ, չար ու հիմար.  
Ինչո՞ւ նկարեցի յես այդ աղջկան,  
Ինչո՞ւ նկարեցի և ինչո՞ւ համար:

Քո այն բազմաթիվ ֆորմուլները բոլոր  
Յես չլուծեցի, յես զարձաթեթե,  
Զղջացի հետո, հետո իմացա,  
Վոր մնացի յես ամենքից յետև ...

Իմ ընկերները առաջ ընթացան,  
Իսկ յես չզարձա յերբեք նկարիչ,  
Թեկուղ նայում եմ գլխարթ հուշերով,  
Սիրով նայում եմ յես այդ նկարին ...

## ԲԱՅԻՆԻ ՎՐԱ

Ինչպես ջրերն են շառաչով անցնում  
Յեվ փրփրում են անդուսպ ծիծաղեց,  
Յեվ ուժգին դարկում ժայռերին այն կեղ,—  
Այդպես ել ահա, գիժ ու կատաղի,  
Կանցնի, սիրելիս, մեր այս հողմաշունչ  
Ջահելությունը, վոր տրված ե մեզ ...

Սակայն աշխատենք, վոր խայտանկար  
Ջահելությունը մեր այս հրաշունչ,  
Մեր այս հասակը հողմային ու վառ,  
Վոր ջրվեժի պես առաջ ե խոժում,—  
Զկորչի անհետ ու իզուր, իզուր  
Զցնդի տնցած որերի մոլժում ...

Լծենք մեզ այս վառ, վիթխարի կյանքին,  
Այս հերոսական ընթացքին համառ,  
Յեվ խնդուն նայենք այս արեղակին,  
Մաքառենք այս մեծ աշխարհի համար,  
Վոր մեզ լուսեղեն դարուններ բերեց  
Յեվ բերում ե մեզ վոսկեղեն ամառ ...



## ՀԻՇՈՒՄ ԵՍ, ԳՈՒՐԳԵՆ

Հիշում ես, Գուրգեն,—

Անցնում եյինք մենք ծիծաղով, կանչով,  
Յերկինքն եր կապույտ, որը կիրակի,  
Անցնում եյինք կանաչ արտերի միջով,  
Դնում եյինք մենք շաբաթօրյակի:

Հիշում ես, ինչպես զրոհի անցանք,  
Յեվ առվի վրա կամուրջ կապեցինք,  
Իսկ հետո ջուրը սրընթաց անցավ,  
Իսկ մենք խնդացինք, իսկ մենք ծափեցինք . . .

\* \*

Հիշում ես, Գուրգեն,

Անցնում եյինք մենք ծիծաղով, կանչով,  
Յերկինքն եր կապույտ, որը կիրակի,  
Անցնում եյինք մենք արտերի միջով,  
Տոնն եյինք դառնում շաբաթօրյակից:

## ՀՐԱԺԵՏՏ ԳՈՒՐԶՈՒՅԻՆ

(Նավի վրա)

Մնաս բարով, չքնաղ Գուրգուֆ,  
Յեվ Պուշկինի փոքրիկ տնակ,  
Կիտարիաներ, վոր դեռ յերկար  
Այդպես կանգնած պիտի մնաք:

Ծովի ավազ և փրփրուն  
Դուք ալիքներ լուսնանման,  
Վոր պիտի հար պոկվեք ծովից  
Յեվ միշտ ափին պիտի մնաք . . .

Սրբել եք դուք վորքան հեռքեր,  
Յերգեր աստղով ու սիրով լի,  
Չկան նրանք, բայց դուք անվերջ  
Չեր ափերն եք ծեծում ելի . . .

Հար բաղխվում եք ավազներին  
Յեվ ընկնում եք ծովի վրա,—  
Մնաք բարով, չքնաղ ջրեր  
Յեվ ալիքներ լուսնանման . . .



\* \* \*

Սիրում եմ քեզ, Շախիր, սիրում եմ քեզ, Մուշեղ,  
Թեև ձեր ձեռքից յես շատ եմ տուժել,  
Բայց դուք յեղել եք անսայթմք, անշեղ  
Կոմյերիտականներ և վսշ թե տաշեղ:

---

\* \* \*

Սիրիր կյանքը,  
Սիրիր թափով,  
Մի ընթացիր  
Կյանքի ափով:

Մտիր խորքերը  
Մեր այս վառ կյանքի,  
Վոր կյանքդ լինի  
Պայծառ ու անզին:

Մաքառիր մեր վեհ  
Գալիքի համար,  
Վոր լինես անմեռ  
Ու լինես անմար:

---



ԻՆՉ

Որորուն՝ որերս անցան,  
Յերերուն՝ սերերս անցան . . .

Զգում եմ՝ փոխվում եմ արդեն,  
Փըլչում են հույզերս մշուշ.  
Ու կյանքը, ու կյանքը մեր նոր  
Ինչ ուրիշ խորքեր ե քըշում . . .

Դիշերներ, գիշերներ կապույտ,  
Դուք ինչքան արագ անցաք . . .

---

ՊՈԵՄՆԵՐ



Ոսկար Ուայլդն ե հանճարեղ զրչով  
 Զահել հասակի հմայքը յերգել.  
 Իր հռչակովոր զրքում ֆանաաստիկ  
 Նկարագրում ե նա մի պատանի,  
 Մի հրապուրիչ, վռակեղեն հասակ,  
 Վոր գերադանց ե ամեն մի բանից:

Ահա գեղեցիկ, չքնաղ այդ տղան  
 Կանգնում ե մի որ մի վարպետի մոտ.  
 Վարպետը դյուլթված նայում ե նրան,  
 Յեվ իր պարտեզում, մի վառ առավոտ  
 Նրա հասակը այնքան թովչական  
 Առնում ե մի գորշ կտավի վրա:

Վերցնում ե տղան իր այդ նկարը,  
 Տանում, կախում ե սենյակի պատից.  
 Հետո կանգնում ե նկարի գլմաց,  
 Յերկար նայում ե իր այդ նկարին.  
 Յեվ թվում ե թե նկարված ժամից  
 Անցել ե արդեն միքանի տարի ...

— Կնճիռներ կիջնեն իմ այս ճակատին,  
 Մաղերիս վրա կթափվի արծաթ,  
 Իսկ այս նկարը կմնա պատին,  
 Շրջանակի մեջ անփոփոխ, անձայն,  
 Նրան նայելով կվողբամ յես իմ  
 Զահելությունը, վոր արագ անցավ ...



Յեւ մորմոքելով փակում ե դուռը  
 Փոքրիկ այդ տղան, չքնաղ պատանին.—  
 Լուռ չափչփում ե փողոցներն անդործ,  
 Ակումբից ակումբ անցնում ե մենակ,  
 Հեղքում ե մարդկանց շարքերն ալեկոծ  
 Յեւ շուռ ե գալիս ամբողջ ժամանակ:

Յեւ յերբ հոգնում ե, կանգնում ե նորից  
 Նկարի դիմաց իր այդ գեղեցիկ,  
 Նայում ե յերկար ե արձանացած.  
 Յեւ մորմոքում ե, վոր իր հասակը,  
 Գեղեցկությունը իր այդ գունագեղ  
 Կցնդի մի որ, վորպես ծիածան:

Ավադին ընկած ալիքի նման,  
 Կանցնի դյութական իր կյանքը շքեղ,  
 Կցնդի արագ, ե այդ բոլորից  
 Պատին կմնա մի չքնաղ նկար,  
 Շրջանակի մեջ կշողա թովիչ  
 Մի հասակ խնդուն ու խայտանկար:

## 2

Տարիներ են անցնում, ե մի որ նորից  
 Փակում ե տղան սենյակի դուռը,  
 Թախիծով անհուն ու դառնակակիծ  
 Նայում ե պատից կախված նկարին,  
 Յեւ ի՞նչ ե տեսնում. թվում ե նրան,  
 Վոր ծերանում ե նկարը պատին ...

Մութ կնճիռներ ե տեսնում ճակատին,  
 Քունքերի վրա խռնված գծեր,  
 Նկարը ամբողջ թվում ե նրան  
 Ծերացած, տգեղ, այլանդակ ու ծեր,  
 Բայց նայում ե նա, սոսկումով ահեղ,  
 Չըռած աչքերով դեռ նայում ե վեր ...

Իսկ մի յերեկո, յերբ ժամում ե տուն,  
 Աղաղակում ե նա սարսափահար.—  
 —Ո՛ր, դու փոխվում ես, ծերանում ես դու,  
 Լուռ ավերվում ես, իմ վոսկի նկար,  
 Ցած իջի՛ր պատից, իմ ջահելություն ...  
 Ա՛խ, ծերունկ վարպետ, հանգավ ինչ վոր կար...

Յեւ ապա մոմի գեղին լույսի տակ  
 Ընթանում ե նա դեպի նկարը,  
 Հանում ե ծոցից մի փոքրիկ դանակ,  
 Բըրքջում ե ... ու ... վազում ե հարբած,  
 Մեխում ե ամուր նկարի, սրտում,  
 Նկարը պատից շարտում ե ցած ...

Լավում ե մի ճիշ. հետո լուռթյուն.  
 Բացում են դուռը, տեսնում են արնոտ,  
 Հատակին ընկած ծերացած մի մարդ,  
 Մի դանակ ցցված արյունոտ սրտում,  
 Իսկ պատից կախված ժպտում ե մի վստ,  
 Գեղեցիկ, չքնաղ պատանու նկար ...



Թշվառ պատանի, քո հասակն եր այդ,  
Վոր անցավ արագ առանց արդյունքի,  
Պատին թողնելով մի փոքրիկ նկար,  
Վորպես մի սավեր քո ամբողջ կյանքից.  
Յեվ դու չիմացար, թե ինչպես անցավ  
Պատանեկական քո կյանքը անդին...

3

Այդպես եք ահա ապրել ու անցել,  
Շրջանակներ եք թողել պատերին,  
Վսակեղծ, սիրուն ու չնաշխարհիկ.  
Ո՛ր, դուք սերունդներ, ո՛ր, լուսաբացի,  
Հասակներ վսեմ ու գարնանային,  
Ո՛ր, արշալույսներ անցած աշխարհի:

Յեկանք մենք սակայն և ընձեռնեցինք  
Ձեզանից հետո մի վեհ աշխատանք,  
Յեվ ձեզանից վառ կյանքը սիրեցինք.  
Ռուբերով յերկրի խորքերը մտանք,  
Ձի մենք աշխարհը յեղերքից յեղերք  
Հոշոտված, հիվանդ ու ավեր գտանք:

Յեվ մենք ել ունենք վոսկեղեն հասակ,  
Յեվ ջահելութուն, վոր ձեզ եր տրված.  
Մենք ել ձեզ նման արևների տեսանք,  
Բայց մենք առաջին սերունդն ենք զվարթ,  
Վոր փոփոխում ենք աշխարհը անդարձ,  
Մեր կուրծքը հզոր հողմերին տված:

Մենք կախ չենք տալիս մեր հերոսական  
Յերիտասարդական հասակը իդոլ  
Թանգարաններում մթին ու անլույս,  
Ձենք դնում շողուն շրջանակներում  
Վոգեորությունը մեր այս անսպառ,  
Յեվ տարիները մեր այս վոսկեհյուս...

Մենք կհաղենք, զգնատ, և գիտենք ինչու  
Ապրում ենք այս վառ արևի ներքո.  
Մեր ամեն ուրը լցված է հնչյուն  
Աշխատանքների շառաչուն յերդով,  
Մենք այս աշխարհն ենք կառուցում հիմքից  
Սևիական արյամբ, սեփական ձեռքով:

Վարարուն, հորդուն մի գետի նման  
Հոսում է մեր վառ հասակը թովիչ,  
Մեր գարնանային ուժը դյուլթական  
Խուժում է առաջ և մղվում թափով  
Դեպի ընդերքը այս պայծառ հողի,  
Դեպի գաղտերը մեր համայնական:

Իմաստ է դրվում առաջին անգամ  
Մեր ամբողջ կյանքին, ընթացքին անշեղ,  
Լցվում է հյութեղ բովանդակությամբ  
Մեր յուրաքանչյուր վայրկյանը ամսեռ.  
Յեվ գիտենք ինչու հավատով լցված  
Դեռ պիտի կռվենք ու կերտենք անվերջ...



Զքնանդ պատանի,—հենց այդ եր ահա,  
 Վոր ինձ հիշեցրեց պատմությունը քո.  
 Յե՛վ վոդբերգական քո կյանքը անդին,  
 Զահելությունը քո վոսկենկար,  
 Վոր անցավ այնքան խաբուսիկ ու ծուխ,  
 Պատին թողնելով մի փոքրիկ նկար...

Նրա անունն եր Նախշուն. նրան հաճախ եմ հիշում,  
 Յե՛վ միշտ նրան հիշելով, իմ մանկությունն եմ հիշում.  
 Յերբ վոր դարունն ե գալիս, և ջրերն են խըշխըշում,  
 Յերբ վոր ծառերն են ծաղկում, յես նրան եմ միշտ հիշում:

Աչքեր ուներ նա սև-սև, գլխին ուներ սև մազեր.  
 Կարծես, կարծես յերազ եր, վոր անցել ե ու չկա.  
 Ա՛խ, վորքան եմ նրա հետ մեր հանդերում վազվղել,  
 Ա՛խ, վորքան ենք խաղացել մեր հանդերում յես ու նա...

Մեր հանդի մեջ արևոտ, մի ուռի կար առվի մոտ,  
 Շուրջը կարմիր կակաչներ, վայրի խոտեր, երենջնակ.  
 Նստած փայտե ձիերը, գարնան ամեն առավոտ,  
 Վաղում եյինք յես ու նա, փրովում նրա շուքի տակ:

Փրովում եյինք ու խաղում, հետո վաղում, ծիծաղում,  
 Բաղում եյինք երենջնակ, և՛ բաղեղներ, և՛ կակաչ,  
 Բնում եյինք հետո մենք այդ խոտերում շողշողուն,  
 Ամեն մեկս մեր կարմիր ծաղկեփնջերը գրկած:

Մի որ յերկար խաղացինք, և՛ կակաչներ քաղեցինք,  
 Յե՛վ գլխարկներ հյուսեցինք ծաղիկներից մեր քաղած.  
 Յես հիշում եմ, գարուն եր, ողջ ջինջ եր, գեղեցիկ,  
 Որը կեսօր եր դարձել, բայց կապույտ եր, դեռ խաղաղ:

Հանկարծ հանդից այդ խաղաղ, գլխին նախշուն մի  
 փափախ,

Իր փայտե ձին չափ տալով, քշեց յեկավ գիծ Անտոն.  
 Նա մեր աղի տղան եր, վոր մեզ ծեծում եր հաճախ,  
 Մեր հասկերը կոխելով, հպարտ անցնում եր հանդով:



Յեկավ հասավ բարերացած, հետո իջավ «ձիուց» ցած,  
Վախից փոքրիկ Նախշուհը գլխարկն առավ ու փախավ.  
Յես լաց յեղա, բայց իզուր, նա մոտեցավ ինձ կամաց,  
Վառ արեւը աչքիս դեմ կարծես ծռովեց ու խաղաց ...

—Ա՛յ, դուք բոբիկ լակոտներ,—ասաց Անտոն, նայեց  
վեր,—

Զի յեմ քըշում, գալիս եմ, իսկ դուք ճամբա չե՞ք տալիս,  
Դուք նստում եք ճամբիս դեմ և չե՞ք ուղղում բարեկեր,  
Յեվ չե՞ք ասում—վեր կենանք,—աղի աղեն ե գալիս:

Ասաց Անտոն ծուռ նայեց, ձեռքով «նոսր յղը» պահեց,  
Ամուր դարկեց իմ գլխին—յես կանչեցի ողնություն,  
Փոքրիկ եյի, ո, փոքրիկ, իսկ նա հարուստ, իսկ նա մեծ,  
Ո, իմ անուշ, իմ անուժ, իմ արցունքոտ մանկություն:

Ծաղկե գլխարկս առավ, դրեց գլխին ու դարձավ.

—Ել հանդ չգնք,—ասաց նա,—ծաղիկներս չքաղեք,  
Թե չե նորից կծեճեմ,—ու վաղ տվեց բարձրացավ,  
Առվի ափին կարմրած ինչքան կակաչ կար քաղեց:

Յեկավ Նախշը կակաչով, հանդը լցրեց իր կանչով,  
Լացով նայեց Անտոյին, չեր իմանում ինչ անի.—  
Վերցրեց մի քար, վոր խփի, քարը նետեց հառաչով  
—Ինչո՞ւ տղա չեմ ծնվել, անի, անիծվեա դու նանի ...

\* \* \*

Հետո անձրև յեկավ քիչ ու անձրևից հետո ջինջ  
Դաշտի վրա դեմ ու դեմ, փովեց մի վառ ծիածան.  
—Վաղեմ պիտի ու անցնեմ ծիածանի տակով յես,  
Դառնամ տղա ու յես գամ, նրան ծեծենք ևս անգամ:

—Հավ,—ասաց յես նրան,—արցունքների մեջ կորած,—  
Յես կկանգնեմ տուփի մոտ, իսկ դու վազիր, շատ արի,  
Ու վաղ տվեց Նախշուհը կակաչների մեջ կորավ,  
Յես մնացի ծառի տակ, մենակ կանգնած մի քարի:

Գնա՛ց, գնա՛ց կարմրած, ծաղկե գլխարկը դրած,  
Վաղեց, վաղեց, վոր անցնի, դառնա տղա իբրե՞թե,  
Սակայն ինչքան նա վաղեց, ծիածանը միշտ մնաց  
Իր առջևում իսկ ինքը՝ ծիածանի դեմ ու դեմ ...

Կանգնել եմ յես առվի մոտ, ու կանչում եմ արցունքոտ,  
—Վաղիր, վաղիր ասացի—մոտեցար հա, մոտեցար.  
Ու վաղ տվեց Նախշուհը, յերկար վաղեց մինչև վոր  
Հանկարծ նրա դեմից վողջ ծիածանը չքացավ ...

Հետո նստեց ու լացեց, փրովեց հանդում ու կանչեց.  
—Ա՛յ, գեղեցիկ ծիածան, ինչո՞ւ, ինչո՞ւ շուտ անցար.  
Որեր անցան, տարիներ, և այդ աղջիկն ել հանկարծ  
Նա յեւ անցավ չքացավ, վորպես կապույտ ծիածան ...

Ել չտեսա նրան յես, և՛ վոչ ել մեր լուսատես  
Կակաչները, ուռենին, գիժ որերը մեր անքուն,  
Յեվ վոչ ել գիժ Անտոյին,—արշալույսի լույսի պես,  
Ծիածանի պես անցար, ով անուրանի մանկություն:

Ա՛յ, ծաղիկներ գեղեցիկ, դանդաղաձև, ցանուցիր,  
Ո՛, պարզամիտ մանկության դու առաջին միջնադ,  
Վոր քըսվեցիր մեր վոտքին ու ցողի պես գնացիր,  
Պոտերի տակ մնացիր, դու մանկության վոսկե շաղ ...



Փոքրիկ աղջիկ միամիտ, լուսածածան ու անմիտ,  
Ո՛ւր ես, ո՛ւր ես հիմա դու, իմ լուսավոր ծիածան.  
Ա՛խ, ինչո՞ւ դու այդքան շուտ, արագ անցար իմ դեմից,  
Իմ հուշերում թողնելով անհետացող մի կածան ...

Ծիածանի նման դու շողշողացիր մեր հանդում,  
Ինչքան արագ անցար դու ու չքացար շաղի պես,  
Ա՛խ, գեղեցիկ դու արտուտ, վոր սուզվեցիր մեր արտում,  
Հիմա կանգնել եմ հանդում ու կանչում եմ նորից քեզ:

Ծիածաններ յես տեսա, վոր դու կյանքում չտեսար  
Յե՛վ արևներ գեղեցիկ, վոր մեր հանդում շողացին,  
Ծիածաններ յես տեսա, վորոնց յերբեք չհասար,  
Յե՛վ ծաղիկներ, վոր գարնան լույսերի հետ խաղացին:

Շուրջս գարուն, յերգուսեր, և՛ կակաչներ, և՛ լույսեր,  
Մեր նոր հանդում արևոտ նստել եմ յես առվի մոտ.  
Որորվում են զանգածև ծաղիկները այս լուսե,  
Գարնանային գեղեցիկ առավոտ ե, առավոտ:

Առվի վրա կուցած, լսում եմ մի վոտնաձայն  
Մեկը կարծես հանդի մեջ ինչ-վոր բան ե մոռացել,—  
Հասկերի մեջ որորվող ծաղկի նման դու անցար,—  
Խոտերի տակ Նախշունի վոտնաձայնն ե մնացել ...

Մնացել ես միայն դու, ո՛վ գեղեցիկ մանկություն,  
Յե՛վ ուռենին, և՛ առուն, և՛ մեր խաղերն են անցել.  
Յե՛վ կակաչներն արցունքոտ վաղուց սուզվել են միգում,  
Յե՛վ գիժ Անտոն ե անցել, և՛ Նախշունն ե գնացել ...

Սակայն հիշում եմ նրան, այն աղջկան հուրհրան  
Վորին շողի պես դյուլթեց ծիածանը ու տարավ,  
Նա, վոր լացով վազ տվեց ծաղկե գլխարկը դրած  
Վաղեց, վաղեց ու անդարձ կակաչների մեջ կորավ ...

Աչքեր ուներ նա սև-սև, գլխին ուներ սև մազեր,  
Կարծես, կարծես յերազ եր, վոր անցել ե ու չկե.  
Ա՛խ, վորքան եմ նրա հետ մեր հանդերում վազվզել,  
Ա՛խ, վորքան ենք խաղացել մեր հանդերում յես ու նա ...



Ո՛, անտառ, անտառ, ո՛, անտառ մթին,  
 Յե՛վ վայրի, և՛ մեծ, և՛ ահարկու.  
 Քեզ չեմ մոռանա, քանի ապրում եմ,  
 Քանի կարոտով իմ սիրտն ե զարկում:

Հիշում եմ ահա. անձրև եր, շոշոն,  
 Գաղթը նետել եր ինձ մի մութ անտառ.  
 Բախտը չգիտեմ ինձ ո՛ւր եր քըշում  
 Յե՛վ զարհուրելի զարկում անդադար:

Անձրևն եր ծեծում իմ ուսերը մերկ,  
 Իմ կուրծքը անծածկ, սրունքներս բաց,  
 Յե՛վ կաթիլների միալար զարկով  
 Տերևները թաց թափվում եյին ցած ...

Հիշում եմ՝ ընկա մի ծառի բնին,  
 Անձրևների տակ ու հեկեկացի,  
 Ծառերն ասացին,—մանկիկ իմ, քնիր,  
 Յե՛վ տերևները ինձ վրա լացին ...

Ո՛, անտառ, անտառ, ո՛, անտառ մթին,  
 Յե՛վ վայրի, և՛ մեծ, և՛ ահարկու,  
 Քեզ չեմ մոռանա, քանի ապրում եմ,  
 Քանի կարոտով իմ սիրտն ե զարկում:

Քնեցի յես խոր, քնեցի լացով,  
 Մաղում եր աշնան անձրևը դեմքիս.  
 Արթնացա, տեսնեմ, մի փոքրիկ աղջիկ  
 Վերմակում ընկած քնել ե կողքիս:

Ո՛վ եր, չիմացա, չիմացա վռչինչ,  
 Նա շնչում եր խոր և շնչում եր տաք,  
 Յե՛վ իրար գրկած քնեցինք մենք ջինջ,  
 Մթին անտառում, անձրևների տակ ...

Քնեցինք վորպես և՛ յեղրայր, և՛ քույր,  
 Յե՛վ այնքան խաղաղ, և՛ այնքան անուշ,  
 Կարծես մենք ծնվել և ապրել եյինք  
 Հենց այդտեղ, այդ մեծ, մթին անտառում:

Ո՛, անտառ, անտառ, ո՛, անտառ մթին,  
 Յե՛վ վայրի, և՛ մեծ, և՛ ահարկու,  
 Քեզ չեմ մոռանա, քանի ապրում եմ,  
 Քանի կարոտով իմ սիրտն ե զարկում:

Հանկարծ զգացի դեմքիս մի տաք շունչ,  
 Աչքերս բացի, տեսնեմ կուցած,  
 Ինձ իմ վերմակից մի մարդ ե քաշում,  
 Վառքին տրեխներ, կողքին հրացան ...

—Վեր կաց, մանկիկ իմ, վեր կաց, քեզ տանեմ,  
 Անտառի մեջ կա մի փոքրիկ տնակ,  
 Այնտեղ կրակ կա, դու կտաքանաս ...  
 Դու պետք ե ապրես, շուտ վեր կաց, գնանք ...

Նա ինձ շալակեց, իսկ աղջիկը, նա,  
 Կաց յեղավ, չեկավ, նա մնաց մենակ,  
 Նա մնաց այնտեղ, անտառում քնած  
 Տերևների տակ, անձրևների տակ ...



Ո՛ր, անտառ, անտառ, *հ*, անտառ մթին,  
 Յե՛վ վայրի, *և՛* մեծ, *և՛* ահարկու,  
 Քեզ չեմ մոռանա, քանի ապրում եմ,  
 Քանի կարոտով իմ սիրտն ե զարկում:

3

Հեռավոր յեղբայր, փրկարար դու ձեռք,  
 Ո՛վ դու անծանոթ պայծառ բարեկամ,  
 Անտառում ընկած մեռնում եյի յես,  
 Դու ինձ վերահաս փրկության յեկար:

Իմ ամբողջ կյանքը քեզ եմ պարտական,  
 Ընկեր անծանոթ, փրկարար անգին,  
 Քո ձեռքով ահա մեծացել եմ յես,  
 Ու հասել եմ յես այս անուշ կյանքին:

Իսկ նա, յերեւի, մահացավ այնտեղ,  
 Աղջիկն այն փոքրիկ, կիսաքաղց ու խեղճ,  
 Այն դեղին, դեղին տերեւների տակ,  
 Անձրեւների տակ ... այն անտառի մեջ ...

Ո՛ր, անտառ, անտառ, *հ*, անտառ մթին,  
 Յե՛վ վայրի, *և՛* մեծ, *և՛* ահարկու,  
 Քեզ չեմ մոռանա, քանի ապրում եմ,  
 Քանի կարոտով իմ սիրտն ե զարկում ...

ՎՈՏՆԱԶԱՅՆԵՐԸ

«Զգուշ, չդիպչես շրջանակներին» ...

1

Դանդաղ կորացող աղեղի նման  
 Ծովում եր որը, փակվում տրամաշուք.  
 Իսկ նա դեռ նստած պարտեզի դիմաց,  
 Յերազում եր լուռ, չափում ու հաշվում,  
 Ավազի դեղին շեղջերից կամաց  
 Շուրջը անհամար գծեր եր քաշում:

Շրջանակների վրա կռացած,  
 Դուրսը հենած իր գույք ձեռքերին,  
 Մտորում եր նա, յերբ մի վտանաձայն  
 Յրեց հորձանքը իր տաք մաքերի:  
 Յե՛վ նա ձեռքերը պարզելով գոչեց.  
 «Զգուշ, չդիպչես շրջանակներին»:

—Դե, մեռի՛ր, ծերուկ,—ասաց զինվորը,  
 Շրջանակները ցրելով անձայն,—  
 Քնած եյիր դու ... Եթ, հիմար ծերուկ,  
 Դու չլսեցիր վոչ մի վտանաձայն ...  
 Իսկ հիմա քնի՛ր ... Նիզակը շողաց,  
 Զինվորը ժպտաց և արագ անցավ ...

Փովեց նա այսպես կապույտ ծովի դեմ,  
 Հռոմեացի զինվորի ձեռքով,  
 Յե՛վ իր արյունով ներկեց ավազե  
 Շրջանակները.—*հ*, նա անտարբեր,  
 Մտքերում սուղված չիմացով յերբեք,  
 Վոր գրավել են քաղաքը արդեն...



Ով սիցիլիացի դու մեծ Ֆիդիկոս,  
Դու կապույտ կղզու անցած բնակիչ,  
Դու հավետ անմեռ մաթեմատիկոս,  
Յեւ հավերժ անցած աստղերի տակից,—  
Յերգում եմ հիմա յես քո երեզլան,  
Այս վահս, այս վառ արևածագին:

Նստած ծովի դեմ այդ հավերժական,  
Տաք ավազների վրա կուսցած,  
Կառուցում եյիր ու դծում անվերջ,  
Իսկ նրանք ռազմի յերգերով յեկան,  
Փռնցին շուրջը արյուն ու ավեր  
Ու գրավեցին կապույտ Սիցիլիան:

Խուժեցին ռազմի հրոսակները,  
Նրանք արյուն ու ավեր բերեցին,  
Հողմի պես յեկան և նիզակները  
Չխնայեցին յերբեք քաղաքիդ,  
Յեւ քո ավազն շրջանակները,  
Յեւ ցնորքները քո այդ գեղեցիկ ...

Դու ապրում եյիր մի փոքրիկ կղզում,  
Ուր ստրկութեան կրունկն եր կոխել,  
Յեւ տենդում եյիր այդ փոքրիկ կղզուց,  
Վոչ թե աշխարհը հիմքից փոփոխել,  
Այլ վտաքդ դրած մի հենակետի՝  
Մեր մոլորակի պառլյալ փոխել:

Մարդկային մտքի հողմոտ ծովերի  
Ո՛ր, դու առաջին կապույտ առաջաստ,  
Վոր ձգտում եյիր անհաս ամերի.—  
Ո՛ր, ավազներում մոխրացած յերազ,  
Դեռ աղմկում են վտանաձայները  
Յեւ ավազներում, ե՛ր աշխարհում այս ...

Ձեր յերազները մնացին յերազ,  
Ավազում սուզված լուսաբծակներ,  
Իսկ ինչ վոր հետո աշխարհում յեղավ,  
Յեւ վորպես արև լույս արծակեց,  
Ձեզանից վոչ մի սերունդ յերբևե  
Ձկաբողացավ զգալ ու չափել ...

## 2

Նա վառվեց վորպես վիթխարի արև  
Մեր մոլորակի արևամուտին,—  
Ո, հին Արքիմեդ, ո, ստրուկ դարեր,  
Վոր տենդում եյիք յերջանիկ կետին  
Հենել ձեր վտաքը և մեր յերկիրը  
Գնդակի նման սոսկ առաջ վարել ...

Շարժվում ե հիմա մեր մոլորակը,  
Յեւ մենք տեսնում ենք պառլյալ նրա.  
Ո՛ր, անդարձորեն նա շուռ և գալիս  
Իր նոր, հաստատուն առանցքի վրա,—  
Յեւ արեգակն ե հիացքից դողում  
Ու թափում անվերջ ցնծութեան կրակ:



Ո՛ր, նոր աշխարհի ստեղծագործություն,  
Հողի նոր բուրմունք, ո՛ր, արգասավոր  
Արեգակի տակ սկսվող նոր կյանք,  
Ո, նոր մարդկության կապույտ առավոտ,  
Ինչպե՞ս յերգեմ յես այս սկիզբը մեծ,  
Այս լուսաբացը բոլր ու փառավոր:

Անմեռ արեգակ, վոր գուրգուրում ես  
Այս մոլորակը անհուն գթությամբ  
Յեվ քո շողերի ցանցի մեջ առած  
Պահում ես նրան քո լույսերի տակ,  
Դո սիրով շնայլ, շողերով առատ  
Դովի՛ր դառ նրան, փայփայլի՛ր ու տար ...

Ահավասիկ մենք, ով մեծ Արքի-մեղ,  
Մեր ուկիանի դեմ այս փոթորկաշունչ  
Նստած գծում ենք նոր շրջանակներ,  
Յեվ գումարում ենք, չափում ու հաշվում,  
Յեվ մեր ավազի շեղջերին չոքած  
Կառուցումներ ու գծեր ենք քաշում:

Սուզվել ենք մաքի մակընթացության  
Ստեղծագործության անծայր վոլորտում,  
Ճեղքում ենք կիզիչ անապատները,  
Յեվ ճախրում ենք մենք սառուցյալ գոտում,  
Սլանում են մեր սավառնակները  
Արեգակների, ամպերի մոտով:

Յեվ ո՛վ ե հասել ստեղծագործության  
Այսպիսի անդուսպ ալիքի թափին,  
Յերբ անհնար ե մարդկային մտքի  
Յեվ հերոսության թռիչքը չափել,  
Յերբ ամենաթույլ առագաստն անգամ  
Զի՛ ուզում մնալ ովկիանի ափին ...

Ո՛ր, մաքի հուժկու մակընթացություն,  
Վոր որորելով քո հորձանքները,  
Դեպի աստղերն ես նրանց շարտում,  
Ուժգին ծածում ես անհաս ափերը,—  
Ո, դեռ լսվում են վոտնաձայները,  
Վոտնաձայները, վոտնաձայները ...

Հեյ, ո՛վ ե գալիս, և վճիռ դինվորն ե  
Ուզում կոխկրտել մեր ավազները.  
Յեվ ո՛վ ե փորձում տաք ավազներում  
Յրել ու մարել մեր յերազները.  
Մենք ե՛ր գծում ենք, ե՛ր կառուցում ենք,  
Յեվ լսում ենք ձեր վոտնաձայները:

Յեվ մենք կլինենք վերջին գինվորը,  
Վոր ավազների վրա կուցած՝  
Վերջին սվինը կշարտենք ցած,  
Յեվ մեր մատներով՝ հրով տաքացած,  
Կգրենք այսպես.—ամբողջ աշխարհում  
Վոտնաձայները արդեն վերջացան ...



Յե՛վ այն ժամանակ, ո՛ր, վոսկի ա՛վազ,  
 Յե՛վ կառուցումներ, ձեզ վրա յերբեք  
 ել չի մազլցի և վոչ մի կրունկ,  
 ել չի վորոտա վոչ մի հրացան,  
 Կլսվես միայն, ո՛ր, դու աշխարհում  
 Ստեղծագործության հզոր վոտնաձայն ...

# ԲՈՎԱՆԴԱՌԹՅՈՒՆ

62

\* \* \*

5

## Արեգակ

|                 |    |
|-----------------|----|
| Արևին           | 9  |
| Որեր            | 10 |
| Կարոտ           | 11 |
| Անվերնագիր      | 12 |
| Գարնանային յերգ | 13 |
| Գարնան և արևին  | 15 |
| Անվերնագիր      | 16 |

## Խառն յերգեր

|                                 |    |
|---------------------------------|----|
| Նամակ                           | 21 |
| Գիշերային յերգ                  | 25 |
| Պուշկինի կիպարիսները            | 27 |
| Հոֆե եր, հոֆե եր շընկշընկում    | 29 |
| Սերմերի յերգը                   | 31 |
| «Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ» | 32 |
| Նամակ հորս                      | 34 |

## Մանր բանաստեղծություններ


|                       |    |
|-----------------------|----|
| * * *                 | 41 |
| Դու կմնաս միշտ պայծառ | 42 |
| * *                   | 43 |
| Վոսկի սանձեր          | 44 |
| Անտառում              | 45 |
| Սողյութի              | 47 |



|                    |    |
|--------------------|----|
|                    | 62 |
| Անվերնագիր         | 48 |
| Բացիկի վրա         | 49 |
| Հիշում ես, Գուրգեն | 50 |
| Հրաժեշտ Գուրգենին  | 51 |
| * *                | 52 |
| * *                | 53 |
| * *                | 54 |

### Պոեմներ

|               |    |
|---------------|----|
| Չքնաղ պատանին | 57 |
| Ծիածան        | 63 |
| Անտառի յերզը  | 68 |
| Վտանաձայները  | 71 |





ՀՀ Ազգային գրադարան



NL0338332



ԳԻՆԸ 80/4.

26948

ЦЕНА 80 К.



**ХАЧИК ДАШТЕНЦ**

**ВЕСЕННИЕ ПЕСНИ**

ГИЗ ССР АРМЕНИИ, ЭРИВАНЬ